ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՂԱՎՆԱԶՈՐԻՑ ԵՎ ՁՈՐԱՂԲՅՈՒՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ ԻՐԵՐ

ԼԵՈՆԻԴ ԲԻՑԱԳՈՎ

1983 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը շարունակեց ուսումնասիրել Մարմարիկ գետի հովտի հուշարձանները և առաջին անգամ պեղումներ կատարեց Աղավնաձոր գյուղից 1 կմ արևելք գտնվող դամբարանադաշտում։ Պեղվեց 14 դամբարան, որոնցից առավել ուշագրավը զինվորի թաղումով № 3 դամբարանն է։ Այն 2,0×1,5 մ չափերի քարարկղ է, որի 3 պատերը շարված են կոպիտ տաշված գրանիտով, իսկ չորրորդ՝ հյուսիսային պատը՝ մանր քարերով։ Այսպիսի կառուցվածք մեզ լավ հայտնի է Մեղրաձորի դամբարանադաշտի պեղումներից։ Դամբարանը ծածկված էր 2 խոշոր, կոպիտ մշակված սալերով։ Զինվորի կմախքը դամբարանի կենտրոնում էր, ձախ կողքի վրա, դեմքով դեպի հյուսիս-արևմուտք։ Դեմքի դիմաց, ձեռքերի մոտ, գտնվեց գուրզ, լանչապանակ, մեկ խոշոր ճարմանդ, վանակատե նետասլաք և բրոնզե ուլունք։ Առավել հետաքրքիր իրեր հայտնաբերվեցին գոտկատեղի շրջանում (in situ), ուր գրանցվեց 12—13 սմ լայնությամբ մուգ շագանակագույն շերտ, որը, հավանաբար, քայքայված կաշվե գոտու հետքն էր։ Շերտի մեջ գտնվեցին ճարմանդներ և կոճակներ (տախտակ I, նկ. 6, 7)։ Գոտու տակ խրված են եղել բրոնզե երկու դաշույն և բիդ։ Շերտը ուներ նույն հաստությունը, ինչ որ Անդրկովկասում լայնորեն տարածված միջին լայնությամբ բրոնզե գոտիները։ Մ. թ. ա. առաջին հազարամյակով թվագրվող այդպիսի գոտի հայտնաբերել է ժակ դե Մորգանը՝ Շեյթան-Դաղի դամբարաններից մեկում[1]։ Այս երկու օրինակները ցույց են տալիս, որ բրոնզե կոճակները և ճարմանդները կարվել են ոչ միայն դրահաշապկին, ինչպես ենթադրում էին որոշ հեղինակներ, այլ նաև կաշվե գոտիներին։ Եվ եթե վերհիշենք, որ Խոջալուի դամբարանադաշտի դամբարաններից մեկում հայտնաբերված նմանատիպ ճարմանդները կարված են եղել անդրավարտիքին, ուրեմն կարելի է ենթադրել, որ կոճակները և ճարմանդները հին հայկական զրահաշապկի մանրամասներ են։ Հայաստանի պատմության ուրարտական շրջանի զրահաշապկի մեջ այդ նպատակին ծառայել են վոտիվ թիթեղները, որոնք կարվում էին կաշվե հիմքի վրա[2]։

№ 3 դամբարանից գտնված զենքերից ուշադրավ է լանչապանակը (տախտակ I, նկ. 1)։ Այն բրոնզե մի կիսախողովակ է, որի ներսում պահպանվել են փայտի մնացորդներ՝ հեռացող ծայրերին ամրացված երկու մեխով։ Նման գոտիներ՝ ամրացված արծաթե կամ բրոնզե կիսագնդաձև ճարմանդներով, հայտնաբերվել են լոռիբերդյան դամբարանադաշտի ուշ բրոնզեդարյան շրջանի դամբարաններից[3]։ Անկասկած, լանչապանակի մասերից պետք է համարել նաև նրա մոտ գտնված երկու համակենտրոն շրջաններով զարդարված ճարմանդը (տախտակ I, նկ. 5), որը ներսից լցված էր ցեմենտանման զանգվածով։ Նման ճարմանդներ մեզ հայտնի են Լճաշենի, Ռեդկին-լագերի, Խուրշին-հողերի (Շամշադինի շրջան, գյուղ Արծվաբերդ) և Արթիկի դամբարանադաշտի պեղումներից[4]։

Հայտնաբերված երկու դաշույններից մեկը միաձույլ է, կտրվածքում եռանկյուն շեղբով, որի վրա, ամբողջ երկարությամբ, անցնում է սեպիկ (տախտակ II, նկ. 2)։ Դաշույնի դաստակը հարթ է՝ երկու եզրերը ծալված, որոնց ներսում պահպանվել են լազմաթիվ բրոնզե մեխերով զարդարված փայտե ներդիրի մնացորդներ։ Կողքին հայտնաբերվեց Սևանդարաբաղյան տիպին բնորոշ դաշույնի հատված գլխիկը։ Դրանք Հայաստանում հանդիպ են

---

[1] J. de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1889, p. 51, pic. 12.

[2] К. Х. Кушнарева, Ходжалинский могильник (*«Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 112—114)։*

[3] H-J. Kellner, Bronzene Weihe-und Votivgaben, Urartu, Ein Wiederentdeckter Rivale Assyriens, Krefeld, 1979, s. 53.

[4] С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 112; Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 215.



Տախտակ I

գալիս սկսած մ. թ. ա. XIII դ., հարատևում են մինչև մ. թ. ա. VIII դ. և ունեն բազմաթիվ զուգահեռներ (Արթիկ, Էլար, Գոլովինո, Խուրշին-Հոդեր)[5]*։ Մյուս դաշույնն ունի յուրահատուկ ձև և Հայաստանում հանդիպում է առաջին անգամ (տախտակ II, նկ. 1)։ Այն երկմասանի է, կազմված շեղբից և նրա վրա հագցրած դաստակից (դա պարզ երևում է նույնիսկ մետաղի գույնից՝ դաստակը ավելի կարմրավուն է)։ Դաստակի ստորին մասում*

[5] Т. С. Хачатрян, *նշվ. աշխ., էջ 176—177, նկ. 86,* Է. Վ. Խանզադյան, *Էլարի, Երևան, 1979, էջ 159, նկ. 131, աղ. XXIV,* С. А. Есаян, *նշվ. աշխ., աղ. 93;* А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, рис. 48.

կա ուղղանկյուն փորվածք, որտեղ գոդումով հարմարեցված է շեղբի վերին մասը։ Դաշույնի հիշտ թվագրման և տիպաբանական դասակարգման համար դաստակը մեծ նշանակություն ունի։ Այն հատուկ է, վերին մասում քիչ ավելի լայն, որտեղ արված է թեք միջանցիկ անցք։ Դաստակի վերին և ներքին մասերը զարդարված են եղևնանախշով և իրար հետ միացված գծիկներով։ Նման դաստակ ունի նաև դաշույնի հետ հայտնաբերված բիզը (տախտակ II, նկ. 3), բայց սրա դաստակը վերին ու ստորին մասերում լայնանում է և



Տախտակ II

զարդարված է բազմաշարք ալիքաձև գծերով։ Հյուսածո զարդանկարով նմանատիպ դաստակ ունի նաև Արթիկի № 448 դամբարանից հայտնաբերված բիզը, որը թվագրվում է մ. թ. ա. XIV—XIII դդ.[6]։ Լայնացող գլխիկ ունեն նաև Արթիկից հայտնաբերված այդ շրջանով թվագրվող շքասեղների մեծ մասը։ Բայց ի տարբերություն նշված բիզերի դաստակների, այս դաշույնի դաստակը ներքևի մասում չի լայնանում և կազմում է ելուստ, որը կիպ դրրկում է դաշույնի ուսերը, հեռավոր նմանություն տալով մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող լճաշենյան դամբարաններից հայտնաբերված եղանաձև դաստակով սրերին[7]։ Դաշույնի շեղբը երկարավուն է, հատուկ շեղանկյուն, վերջանում է բութ, կլորավուն սայրով, հիշեցնելով կովկասյան տիպի կլորացող կամ կտրված ծայրերով սրերին։ Նման սրեր, որոնց արտադրման

[6] Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 208, նկ. 126։

[7] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, с. 80.

կենտրոնը գտնվում էր Հայաստանի հյուսիսում, մեզ մոտ հանդիպում են բավականին հաճախ և հայտնի են Գոլովինոյից, Արծվաբերդից, Օձունից (Ուզունլար) և այլն[8]։

Զենքերից ուշագրավ է լանջապանակի հետ գտնված տանձաձև գուրզը (տախտակ I, նկ. 2), որը վերեի մասում ունի քառակուսի անցքով կիսակլոր վզիկ՝ կոթառ հագցնելու համար։ Քառակուսի անցքում պահպանվել է փայտ՝ վրան բազմաթիվ մեխերով։ Գուրզը կողքերին ունի 4 ելուստներ։ Նմանատիպ գուրզեր առաջին անգամ հանդիպում են Լճաշենի[9] և Արթիկի[10] մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող դամբարաններում, Ստեփանավանում[11], Մակարաշենում[12], Կիրովականում[13], Ալավերդիում, Ադիյամանում[14] ու Վրաստանում (Թրիալեթի, Սամտավրո[15]) և հարատևում են մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակի սկիզբը։

Զենքերից վերջինը լավ ուսուշած, կոթառը ամրացնելու համար հիմքի մոտ ուղղանկյուն փորվածքով նշաձև նետասլաքն է (տախտակ I, նկ. 3)։ Այդպիսի նետասլաքները հանդես են գալիս մ. թ. ա. VI դ. և լավ հայտնի են Հայաստանի համարյա բոլոր բնակավայրերից։

Զարդարանքի միակ առարկան բրոնզե ուլունքն է (տախտակ I, նկ. 4), որին մոտ ձևեր հայտնի են Արթիկի դամբարանադաշտից և Խուրշին-հողերից[16]։

№ 3 դամբարանի թվագրության համար մեծ նշանակություն ունեն խեցեղեն իրերը, որոնք հիմնականում բրուտագործական դուրգի վրա որակով պատրաստված անոթներ են. միայն երկուսն են ձեռաձեի և տարբերվում են ձևի կոպտությամբ ու գույնով։ Ըստ ձևի խեցեղենը բաժանվում է երեք խմբի՝ սափորներ, քրեղաններ և կճուճներ։

Սափրրներից մեկը ոչ մեծ, սև փայլեցրած, հարթ հատակով ուռուցիկ իրանով, կարճ վզով, կլոր դուրս ճկված շրթով անոթ է (տախտակ III, նկ. 2)։ Վրայով անցնում են բազմաշարք գծեր, որոնցից ցած ալիքաձև գիծ է և դրոշմիչով արված երկշարք սեպաձև նախշ, որը ներքևից եզրափակվում է ակոսով։ Նույնատիպ սափորներ լավ հայտնի են Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզե դարի երկրորդ փուլով թվագրվող նյութերից[17] և Հայաստանի շատ հնավայրերից՝ Ղմշկուտից[18], Էլարից[19] և այլն։ Մյուս սափորը նույնպես ուռուցիկ իրանով, ոչ բարձր լայն վզով, լավ արտահայտված շրթով, հարթ հատակով անոթ է (տախտակ III, նկ. 1)։ Վիզը զարդարված է ալիքաձև և բազմաշարք ներճկված գծերով, իսկ ուսի վրայով անցնում է ակոս։ Նման անոթները լայն տարածում ունեին մ. թ. ա. II հազարամյակի վերջում։ Երրորդ սափորը գորշագույն, անհարթ մակերեսով, ձեռաձեի, դեպի վեր լայնացող իրանով, հարթ հատակով անոթ է, որի հագիվ նկատվող վզիկն ավարտվում է ոչ մեծ շրթով (տախտակ III, նկ. 8)։ Բայց ի տարբերություն նույն շրջանի ձեռաձեի շատ սափորների, այն ճոխ զարդարված է։ Վզի և ուսի վրայով անցնում են ակոսներ, որոնց միջև արված են թեք եզնանախշով լցված ներգծված եռանկյունիներ, որոնք ընդմիջվում են գծերով լցված շեղանկյուններով։

Քրեղաններից չորսը միաձև են (մեկը թերի է և չենք ներկայացրել), սև փայլեցրած ու դեպի վեր լայնացող իրանով, թեթևակի թեքված ուսերով և խոշոր կլորավուն դուրս ճկված շրթով։ Կողքերը զարդարված են տարբեր քանակի ներճկված հորիզոնական գծերով (տախտակ III, նկ. 3, 6, 7)։ Հինգերորդ քրեղանը գորշ գույնի է, ունի նույն ձևը, բայց քանի որ

---

8 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, с. 179.

9 С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, с. 54.

10 Т. С. Хачатрян, Материальная культура Артика, Ереван, 1963, с. 59.

11 Т. С. Хачатрян, Каменные ящики Степанавана («Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի», հ. 5, Երևան, 1959, էջ 59)։

12 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, рис. 79а.

13 А. А. Мартиросян, Раскопки в Кировакане и некоторые памятники ранне-урартского периода (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 9, էջ 76—78)։

14 С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, с. 56.

15 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1940, табл. L.

16 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, табл. 95.

17 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, с. 220—221, рис. 133—135.

18 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, табл. 95.

19 Է. Վ. Խանզադյան, Նշվ. աշխ., աղ. XVII։

ձեռաձեի է, անկանոն է։ Կողքերը զարդարված են թեք գծերով և շտրիխներով լցված խոշոր դիզգագներով, ներքին մասով անցնում է ակոս (տախտակ III, նկ. 4)։ Այս զարդաձևի տարբերակները մեզ հայտնի են Հայաստանից (Էլար[20], Իշևան, Ռեդկին-լաքեր, Դիլիջան[21], Լո-



Տախտակ III

20 Նույն տեղում, աղ. XVII և XIX։

21 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, табл. 89, 101, 115.

ոի-բերդ[22], Դվին[23]) և Վրաստանից (Սամտավրո[24], Թբիլիսի[25])։ Խեցեղենի երրորդ տիպը ներկայացված է միայն մեկ անոթով։ Դա սև, փոքր, հարթ հատակով, ուռուցիկ իրանով, կարճ վզով և խոշոր ներճկված շրթով կճուճ է (տախտակ III, նկ. 5)։ Ուսի վրայով անցնում է եռաշարք կիծ, որը երկու կողմից առնվում է թեք եղնգանախշի մեջ։ Այսպիսով, Աղավնաձորի № 3 դամբարանային նյութը թվագրվում է մ. թ. ա. XII—XI դդ.։

Ուսումնասիրվող կոմպլեքսի մշակութա-ժամանակագրական նշանակությունը որոշելուն նպաստեց նաև հարևան՝ Արովյանի շրջանի Զորաղբյուր գյուղից պատահականորեն հայտնաբերված հավաքածուն։ Վերջինս կազմված է երկու բրոնզե դաշույնից, երկու խոշոր ճարմանդից և մի քանի կավանոթներից։ Ստորև տալիս ենք Զորաղբյուրի գտածոների նկարագրությունը, քանի որ դրանք նմանատիպ են աղավնաձորյաններին։

Զորաղբյուրի դաշույններից մեկը նույնպես երկմասանի է (տախտակ II, նկ. 5), ձևով նման Աղավնաձորի սնամեջ դաստակով դաշույնի տիպին։ Դաստակը կենտրոնական մասում եզրից ունի երկու փոքրիկ ելուստներ, ներքևում՝ միջանցիկ անցք. զարդարված է հասկաձև, հյուսածո նախշով և նման է Արթիկից հայտնաբերված բրի կոթին[26]։ Դաստակի եղանակն հիմքն արտահայտված է ավելի ցայտուն, քան Աղավնաձորի դաշույնինը և սեղմ գրկում է շեղբի ուսերը։ Նմանատիպ դաստակներ ունեն Կորանից հայտնաբերված դաշույնները[27], որոնցից մեկի դաստակը վերնամասում լայնանում է, կազմելով յուրօրինակ գլխիկ։ Վերնամասում լայնացող դաստակով, բայց ուսանց շեղբի եղանակն բռնելի դաշույններ են Թութանհամոնի մումիայի վրայի դաշույնները, որոնք հավանաբար բերված են Միտանիից[28]։ Նմանատիպ կառուցվածք ունի նաև Թուրքիայում գտնվող Զանակ-Փինարից (Քյուլթեփե) հայտնաբերված մ. թ. ա. II հազարամյակով թվագրվող դաշույնի դաստակը[29]։

Զորաղբյուրի նշված դաշույնի շեղբը զարդարված է գալաթներով իրար միացված եռանկյուններով և նման է Արթիկի դամբարանադաշտի երկրորդ խմբի № 386 դամբարանի դաշույնի շեղբին[30]։ Այս հավաքածուի մյուս դաշույնն ունի ցանցկեն դաստակ, որի վերնամասը թեր է (տախտակ II, նկ. 4), իսկ ստորին մասն ունի միաձույլ, եռանկյունաձև կտրվածքներով զարդարված գոտեկապ, որտեղ միացված է այսպես կոչված Սևան-դարբաղյան տիպի դաշույնի շեղբի լեզվակը։ Նմանատիպ են Լճաշենից և ավելի ուշ Ալավերդուց հայտնաբերված մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող սրերի դաստակները։ Այդ թվագրմանը չի խանգարում նաև շեղբի ձևը, որը հանդես է գալիս Անդրկովկասում, սկսած մ. թ. ա. XII դ.։ Հետաքրքիր է երկու դաշույնների շեղբերի ամրացման միանման եղանակը. երկուսն էլ զոդված են, իսկ մեկը՝ լրացուցիչ ամրացված գամով։

Նկարագրվող երկու կոմպլեքսների նմանությունը հաստատում են նաև ճարմանդները, որոնցից մեկը ձևով նման է աղավնաձորյանին, իսկ մյուսն ավելի տափակ է։ Երկուսն էլ լցված են ցեմենտանման զանգվածով։

Հայտնաբերված խեցեղեն նյութը (լայնաբերան սափոր, երեք կճուճ և քրեղան) շենք նկարագրում, քանի որ նմանատիպ անոթներ քաջ հայտնի են Արթիկի դամբարանադաշտից և ուշ բրոնզեդարյան այլ հուշարձաններից։

Այսպիսով, նկարագրվող դաշույնները իրենց զուգահեռներն ունեն Առաջավոր Ասիայի նյութական մշակույթում և նմանվելով կորանյանին, դաշույնների նոր խումբ են կազմում և տեղի վարպետների արտադրանք են։ Ուշագրավ է, որ նկարագրվող երկու կոմպլեքսներում էլ կլորացող կամ հատված ու սուր ծայրերով դաշույններ հանդիպում են միասին։ Սա ակներևաբար խոսում է այս զենքերի որոշակի կիրառության մասին։ Հավանորեն դրանք օգտագործվել են ծիսական արարողությունների ժամանակ։

---

22 Հ. Գ. Դեվեջյան, Լոռի-բերդ, I, Երևան, 1981, աղ. III.

23 Կ. Խ. Կուշնարևա, նշվ. աշխ., նկ. 21։

24 Կ. Ն. Պիխելաուրի, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, табл. III.

25 «Тбилиси», I, Тбилиси, 1978, рис. 19.

26 Թ. Ս. Խաչատրյան, Древняя культура Ширака, рис. 128.

27 П. С. Уварова, Могильники Северного Кавказа («Материалы по археологии Кавказа», вып. VIII, М., 1900, с. 25—26, табл. VIII, 3—4).

28 Б. Б. Пиотровский, Н. Б. Ланда, И. А. Ланне, Сокровища гробницы Тутанхамона, каталог выставки, М., 1973, илл. 25.

29 „Anadolu Medeniyetleri", Istambul, 1983, p. 208, A. 544.

30 Թ. Ս. Խաչատրյան, Артикский некрополь, Ереван, 1979, с. 278, п. № 386.

НОВЫЕ МАТЕРИАЛЫ ИЗ АГАВНАДЗОРА И ДЗОРАХПЮРА

ЛЕОНИД БИЯГОВ

Резюме

В обнаруженном в с. Агавнадзор комплексе вонна были найдены следы кожаного пояса, на который нашито было 14 мелких и одна крупная бронзовые бляшки. Вооружение его представлено бронзовой булавой, небольшим обсидиановым наконечником копья и двумя кинжалами, первый из которых севано-карабахского типа, а второй, имеющий круглую в сечении рукоять, встречается в Армении впервые и находит аналогии в Митани, центральной Анатолии и на Северном Кавказе. Остальные предметы представлены панцирным диском, шилом и многочисленной керамикой различных форм. Погребение датируется XII—XI вв. до н. э.

Коллекция из Дзорахпюра была найдена случайно. Она представлена несколькими керамическими сосудами, крупными бронзовыми бляшками и двумя кинжалами, один из которых имеет ажурную рукоять, а второй по строению ручки напоминает агавнадзорский, а клинка—кинжал из погр. № 386 артикского некрополя и является как-бы связующим. Это погребение также датируется XII—XI вв. до н. э.